ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2025 թվականի N 1023-Ա

«ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի N 138-Լ որոշման N 2 հավելվածի 1.1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ստեղծել «Տեքստիլ ոլորտի օպերատոր» հիմնադրամ (այսուհետ՝ հիմնադրամ):

2. Հիմնադրամը ճանաչել որպես Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման ծրագիրը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 138-Լ որոշման N 2 հավելվածի 1.1-ին կետով սահմանված՝ տեքստիլ ոլորտի արդյունավետ և համակարգված զարգացմանը, նոր ռազմավարությունների և ծրագրերի իրականացմանը նպաստող տեքստիլ ոլորտի օպերատոր:

3. Սահմանել, որ հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինն է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը:

4. Հաստատել հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

5. Հիմնադրամի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Էրիկ Մինասյանին (նույնականացման քարտ՝ 015176696, տրված՝ 28.09.2023 թ., 069-ի կողմից)՝ առավելագույնը 1 տարի ժամկետով՝ մինչև սահմանված կարգով գործադիր տնօրենի ընտրության արդյունքներով ընտրված տնօրենի նշանակումը և պաշտոնի ստանձնումը:

6. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հիմնադրամի պետական գրանցումը և դրա հիմնադրի՝ օրենքով սահմանված մյուս լիազորությունների իրականացումը.

2) հիմնադրամի պետական գրանցումից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ՝ հիմնադրամին հատկացվող գույքի և տարածքի վերաբերյալ:

7. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմի հաստատումից հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն ապահովում է հիմնադրամի գործադիր տնօրենի ընտրության մրցույթի հայտարարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ